Նշանակելի է որ հակառակ անոր որ Յովհաննէս եպս. Հզուեցիէն ոչինչ կը մնայ մեզի հասած իբր գրաւոր աշխատանք կամ գրչագրութիւն և չի յիշուիր ոեւէ աշակերտ, 1574ին զայն կը կոչեն «քանիքուն եւ տիեզերաղուր fաջ եւ արի... վարդապետ» և կ'ըսեն թէ «նա միայն էր մնացել լուսաւոր Հայոց ազգիս» (տե՛ս, Տրդատ եպս. Պալեան, Ցուցակ Հայ Ձեռագրաց Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Կեսարիոյ, էջ 59)(*)։ Գրիգոր Կեսարացի իր ծննդավայրին այս շարժման ազդեցութիւնը կրած է և թերևս այս ներշնչման տակ եղած է հետամուտ ուսման և զարգացման և դիմած է Ամիդ, ժամանակին ամենէն գլխաւոր և ամենէն զարգացած վարդապետին՝ Սրապիոն Ուռհայեցիի քով աշակերտելու համար։

Ինչպէս արդէն բացատրուեցաւ, ողբալի էր Հայերու կացութիւնը ԺԷ. դարուն վերջին կիսուն և էջմիածին բարոյապէս չափազանց անկեալ կացութեան մը մէջ կը գտնուէր։

(*) Որչափ որ այս յիշատակարանը պարունակող Ձեռագիր **Քարոզագիրք**ին գրութեան վայրը անծանօթ է, սակայն ձեռագրին Կեսարիա գտնուելէն կրնանք հետեւցնել թէ անիկա ապահովաբար կը պատկանէր Յովհաննէս եպս. Հզուեցիի։